# 431 «Օրհնության անձրևներ պիտ տամ»,-

1. «Օրհնության անձրևներ պիտ տամ»,-
Տերն է սիրով խոստացել,
Արդ աղոթենք անդադար, որ
Տերն ողորմի ու դրկե:

Օրհնության անձրև,
Տե՛ր, աղոթքով կխնդրենք,
Շա՛տ տուր և շո՛ւտ տուր աղերսն մեր՝
Հորդ հեղեղներ, կաղաչենք:

2. Հորդ անձրևիդ, Տե՛ր, կարոտ ենք
Չորցած երկրի պես ծարավ,
Սուրբ Հոգիովդ այցելե մեզ,
Լուր մեր աղերսն, ո՛վ Աստված:

3. Թաթի չափ ամպ կերևնա, Տե՛ր,
Հազիվ կաթիլ ենք ստացել,
Ողորմած Հայր, լո՛ւր աղոթք մեր,
Պատասխան տուր և դրկե:

4. Տե՛ր, հեռացրո՛ւր մեր թմբիրը,
Կենդանացրո՛ւր, կաղաչենք,
Աշխուժացրո՛ւր հոգիներ մեր,
Արթուն կենանք, աղոթենք:

5. Տե՛ր, աղոթքի զորեղ կապը
Մենք համարձակ կաղերսենք,
Կապն չխզե նույնիսկ մեղքը,
Ուստի, սրտանց կաղաչենք: